

ՏԱՍԵՆՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԿԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարաբարացիքի դիմում են ուղարկել

Կազմակերպիչ Մուսախան Մուսախան

Խմբագրատանը քայքայ է առաջարկում 10—2 մաս (Բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար զմարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ երևանից: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայաստանի ժողովուրդը ինչ կը կարծի: Անգլիա, Գլադստոնի ձառը: Շահաւէտ առաջարկութիւն: Նամակ Աւստրալիայից: Արտաքին լուրեր: ՀԵՌԱԳԻՐ-ՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Յուլիսի 28

Երևանի արեւելեան կողմն է ընկնում Նորգ ավազան քաղաքաձառը, որն աւելի զիւր է, քան թէ քաղաքը: Քաղաքի կենդանոցը հեռու է Նորգը երեք վերստաչափ, իսկ քաղաքից դէպի հիւսիս գնացող մեծ խճուղիի գլխից՝ մէկ և կէս վերստաչափ: Նորգի զիւրը համեմատած քաղաքի զբոս հետ, կարելի է մտա 400 ֆուտ աւելի բարձր համարել Նորգին: Այս պատճառով շատ մեծ զանազանութիւն կայ օդի բարեխառնութեան մէջ, իւր ուր քաղաքի պարտեզներում կիլաւոր, ալտը, ծիրանը և վարունգը հասած են և ուտելի, Նորգում դրանք բոլորովին դեռ խակ են լինում: Յունիս, յուլիս և օգոստոս ամիսներին քաղաքի օդը թէ ցերեկը և թէ գիշերը խառնու, խեղդում է մարդկանց, այն ինչ Նորգում ցերեկը մի թեթեւութիւն է զուր մարդ քայլ օդում, իսկ երեկոները և գիշերները գրեթէ զարնանային զով է զգում: Բացի մաքուր օդից, Նորգի ջուրն էլ աւելի մաքուր է քան թէ քաղաքինը: Քաղաքի երեխաների հարիւրից տասի թուշերը կարծիր ու թարմ չեն, ընդհակառակը՝ Նորգում դարձել թշերով երեխայ հարկ է ք տեսնում: Բոլորն էլ համարու թարմ, կայտառ, զուարթ, քաջառողջ, կարմրաթշիկ, ընդունակ երեխաներ են: Այս բոլորի պատճառը՝ ջուրն ու օդն է, որոնցից զուրկ է քաղաքը: Չը նախելով Նորգի տանի անձաշակ, անկարգ ու անպարմար շինուածքին, չը նայելով փողոցների, ճամբաների նեղիկի, ծուռ ու մուռ, աղբոս և քարուքանդ լինելուն, չը նայելով մեծ մասով բացօդային արտաքիններին և տեղ-տեղ զիւրուած աղբիւններին, այնու ամենայնիւ՝ նորգեցիք աւելի առողջ, աւելի ժիր և աւելի առատածնունդ են, քան թէ քաղաքի բնակիչները: Նորգը բաղկացած է 170 տուն զուտ հայ ժողովուրդից: Գրանք ունեն մի լաւակարգի գեղեցիկ եկեղեցի, կոփածոյ քարից շինած, թաղի մէջ տեղում, որի բակի հարաւային կողմում աղայոց՝ իսկ հիւսիսային կողմում աղջկանց ծխական դպրոցներ են, որոնք բաւականին լաւ են թէ նիթական թէ ուսման կողմից, թէպէտ և տակաւին շատ բան է պակաս, կանոնաւոր ծխական դպրոց լինելու համար: Թաղն ունեցել է միշտ երկու քահանայ, այժմ մէկը վախճանած է և մինն է ժողովրդի հոգեւոր պիտոյը հոգում և մի և նոյն ժամանակ՝ տաս տարուց աւելի է, ուսուցչի պաշտօն է վարում յիշուղ դպրոցների մէջ: Ժողովուրդը սիրում է այս երիտասարդ քահանային, իր ուսուցչական և քահանայական պաշտօնների մէջ ըստ բաւականին ժիր և անշահասէր լինելու համար, բայց ամսոս որ վերջին օրերումս, Պսակ) լրագրի մէջ, սրա մասին մի շատ չափազանց քրքուած գովասանական յօդուած երևաւ: համար, հասկացող նորգեցիներից ոմանց յարաբերութիւնը փոխվել է դէպի սեղ-վահան հայրը, որը գուցէ և մասնակից չէ յիշեալ փրկած յօդուածի յորինելուն: Մենք կը յուսանք որ Վ. վահանը չի պակասացնի իր եւրասիացի դէպի դպրոցները, ուր, իրաւ որ, մեծ աշխատութիւն ունի: Նորգեցիք այժմ որոնում են մի քահանայացու ևս: Խորհուրդ կը առայինք մեր սիրելի ներգեցիներին որ մի այնպիսին ձա-

րէին, որ կարողանար իրանց դպրոցներում ուսուցիչ ևս լինել: Իմ կարծիքով, այս ամենահարկաւոր և առաջին պայմանը պէտք է լինի ընտրութեան միջոցին: Նորգեցից մեծ մասը պարագուում է այգեպանութիւնով և վարուցանքով, փոքր մասը պարագուում է արհեստներով և վաճառականութիւնով, որոց խանութները քաղաքում են: Բոլոր նորգեցիները, և զլիւսաբազէս, վաճառականներն ու արհեստաւորները (նաև քաղաքի դպրոցները գնացող մանուկները), որք ստիպուած են առաւօտները իջնել քաղաք և իրիկնապահին վերադառնալ իրանց տները, զարհուրելի չարարանք են կրում ճամբի 1 1/2 վերստ զառի վեր քարաբարձից: Այդ անտանելի նեղիկի, քարաբարձ և 3—400 ֆուտ քաղաքից վեր անող ճանաւ մաշում է անխնայ ոչ միայն նորգեցից կոչիկները, այլ և նրանց առողջութիւնը. և սարսափելի կերպով դժուարանում է յարաբերութիւնը քաղաքի հետ: Նորգը մինչև 30—40 թւականները համարվում էր զիւր: Այդ ժամանակներում նորգեցիք մտա 400 ռուբլի կաշառ կերցնելով նահանգական պաշտօնակատարներին՝ գրուեցին քաղաքի մաստանում, բայց դրանով բացի վաւար, օգուտ չը տեսնէ մինչև այսօր: Սրանք զրկուելով իրանց յանդի ընդարձակ հողերից, որոնք միացան քաղաքի հողերի հետ, ընկան աւելի ծանր տուրքերի տակ և փոխարէնը ոչինչ չանցան: Այն օրերից մինչև այսօր նորգեցիք քաղաքի մնդուկին վճարել են մտ 60,000 ռուբլի Տարիկ, այժմ իսկ վճարում են 2—3,000 ռուբլի տարիկան տուրք կամ հարկ քաղաքային արկղին, բայց քաղաքը սրանց հինգ կողմից օգուտ չէ տալիս. ոտականութիւնը հակորթութիւն չունի, գիշերապահները երբէք չեն շըջում Նորգում, քաղաքի հաշուով ոչ մի լրացուած չէ վաւարում Նորգում. նորգեցիք հիւանդ մուտելիս լինի չէ կարող 1, 2, 3 ռուբլի այցի փող վճարելով, քաղաքային բժիշկ և մանկաբարձուհի բերել քաղաքից, այլ 6—10 ռուբլի վճարելու է անշուշտ, իսկ չքաւոր հիւանդները խօ միշտ մեռնում են առանց բժշկի ձայն լսելու: Եւ ինչ էք կարծում, այդքան նեղութիւններից ազատվելու համար քաղաքն ինչքան ծախս պիտի անէ, 3 կամ շատը 4,000 ռուբլի, որ նորգեցից 2 տարուայ տուրքն է քաղաքին: Գանի որ քաղաքային վարչութիւնը չը կար, նորգեցիք քաղաքագրներով դիմում էին նահանգապետներին և միշտ լուռ էին թէ պատասխէք, սնդկում փող չը կայ:» այժմ նոյն պատասխանն են լսում քաղաքային գործադիր վարչութիւնից. կարծում են այս հարցը դեռ ևս քաղաքային բնդհանուր խորհրդին էլ չէ առաջարկած, թէ և խեղճ նորգեցիք անդադար խնդրում են պ. քաղաքագրիսին այս մասին:

Այս տարուայ ծառայողները այնքան առատ են որ նոյն պտուղը ինչ որ անցեալ տարի վաճառվում էր լուրով 1 ռուբլ 20—40 կոպէկով, այժմ վաճառվում է միայն 20—30 կոպէկի, այգեհոտերից, այնինչ մրցակաճառները դարձեալ թանկ են վաճառու: Ասում են որ խաղողը քիչ պակաս է և փոչին տեղ-տեղ տուել է, դրա համար լիւր 1 ռ. 50 կ., վաճառվող գինին, այժմ ծախվում է 2—3 ռուբլի: Լաւաշ հացի ֆունտը 3 կոպ. բոքոնը 4 կ., ոչխարի միսը 7 կոպ. տաւարինը 8, և զառանը 6 կ. թէ և միշտ տակաբայից աւելի են ծախվում. ցորի խալվարը (30 պուղ) 25—30—35 ռուբլի, իւղի ֆունտը 35—40 կ. 4 ձուռ 5 կոպ. վառեակը 30—40 կոպ. հար 50—60 կ., Նաթը 9 կոպ. չարբի պուղը 8 ռ. 40 կ., արաղի լիւրը 4-ից բարձրացաւ 5 ռուբ. 60 կ. վառելափայտ սածէնը 35—40 ռուբլ: Տների վարձը թանկ է: Առւտուր չը կայ:

ՆՈՐԱՅՐ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐԻՆ

Թիֆլիս 9 օգոստոսի

«Մշակի» 79 համարի թղթակիցները վերաբերեալ առաջնորդող յօդուածի առիթով եւ ձեռք մի նամակ գրեցի: Գարաբիլիսից, յայտնելով միայն իմ լոկ կարծիքը որ եթէ լրագրութիւնը դաղարի խօսել վարժապետներին և հոգաբարձուներին վրա, մեր դպրոցներն էլ առաջադիմութիւն չեն անի: Գուք այդ մասնաւոր նամակը (ես երբէք ցանկութիւն չունիլ այդ նամակի տպագրութեան) հարկաւոր համարեցիք հրատարակել առանց իմ ստորագրութեան: Այժմ «Կիւղացի» ստորագրութեան սակ ծածկված մի պարտն «Մշակի» 146 համարում պատասխանում է այդ նամակին և զանազան կողմից հայտնաբերուած ճգնում է լուսի պէս ճշմարտութիւնը ոտի տակ դնել: Գարաբիլիսի ծծկեր երեխան էլ, կարողաւով պ. Կիւղացու շողորթութեամբ շարախուած նամակը, իսկոյն կը հասկանայ որ նա չունի խեղճի փշրանք, նրա սրտի մէջ մեռել է ազնուութիւն: Խորհրդին նամակագրի վերջին և առաջին չար նըպատակը մտն է որ աշխատում է հոգաբարձուներին և ժողովրդին իմ դէմ գրգռել, ինքը լաւամարդ գառնաւ է, որ զլիւսաւորն է իր բոնիկը կամաց կամաց աւելացնել տալ: Խեղճ Կիւղացի, մի կտոր ևս հացի համար ստիպուած է հրապարակաւ սուտ խօսել, ճշմարտութիւնն ուրանալ, մարդկութիւնը ոտի տակ դնել:

«Մշակի» 109 համարի նամակի «անխիղճ, խաբարայ, ազգի փողերը լափող, միամիտներին խաբարող» բառերը երբէք չեն վերաբերում Գարաբիլիսի դպրոցի գործիչներին, այլ՝ առնուած են ընդհանրապէս, առհասարակ: Բայց պ. Կիւղացին իր կեղտոտ նպատակին հասնելու համար, չէ ուզում հասկանալ, դիտմամբ այդ խօսքերը մասնաւորում է իր վրա և խօսակցութեան առարկայ շինում: Իսկ ինչ վերաբերում է «մի օր դպրոցը սնանկացած կը հրատարակուի» ասածս խօսքերին, այդ արդէն ինքս բացատրեցի «Մշակի» ներքին լուրերում. այդ մասին կրկին բացատրել իմ կողմից աւելորդ է, իսկ Կիւղացու խօսքը չարամտութիւն: Ես աւել էի թէ հոգաբարձութիւնը մտա 20 տարի է (կրկնում եմ եթէ զիտենայի որ այդ նամակ պիտի տպագրուի, երբէք չէի գրի): Տալի չէ տուել հասարակութեան: Այդ այժմ էլ կրկնում եմ որ մինչև Պոօչեանցի գաղը հասարակութիւնից ոչ ոք չէր իմանում թէ իրանց դպրոցը արքան ծախք ունի, արքան մուտք, արքան եւք, արքան դրամագրուի: Կիւղացու աւելով հոգաբարձութիւնը միշտ հաշիւ է տուել հոգեւոր իշխանութեանը: Ես՝ հաւատալով նրա ասածին և հիմունելով ժողովրդի պահանջի վրա, ասում եմ որ աւելի լաւ կը լինի եթէ 5 տարին մի անգամ էլ հասարակութիւնը հաւաքուի և նրանց մտ կարդացուեն այդ հայր-

ները: Այս վերջին ձեռ աւելի օգտակար է նրան համար որ ժողովուրդը իմանալով որ իրանց առած փողերը շատացել են և ծառայում են իրանց նըպատակին, աւելի կը կրկնապատկէ իր սէրն և յարգանքը դէպի իր աղջային դպրոցը: Կիւղացու խորհրդին նամակից երևում է որ ես թշնամի եմ հոգաբարձութեան և ամէն բան կրքով եմ գրում և որպէս թէ աշխատում եմ ամեն կերպ կտարել հոգաբարձութեան վարկը և նորը ընտրել տալ: Ինչքն Կիւղացին էլ գիտէ որ այդ այդպէս չէ, բայց աշխատում է այդպէս ցոյց տալ: Ես սիրել եմ այդ հոգաբարձութեան, և երբէք չեմ կամեցել դրանց հրաժարուիլը: Այս խօսքերին կենդանի վկայ է պ. Պոչեանցը, որ իր Ղաւրաքիլիսա եկած երկրորդ առաւօտ երբ կանչեց ինձ և առանձին խօսակցութիւն ունեցաւ նոր հոգաբարձու ընտրելու մասին, ես նրան փաստելով հակադրի որ աւելորդ է այդ հարցը զարթեցնել: Այն հակադրող երիտասարդներից շատերը պատրաստուել էին ժողովի մէջ զարթեցնել այդ հարցը, բայց ես նրանց էլ խնդրեցի, նրանց էլ համոզեցի որ թողնեն իրանց մտադրութիւնը: «Վերջին տարին հոգաբարձութիւնը լուսկեց աստիճանաբար զանդաղանալ և դպրոցի պակասութիւնները թողնել երեսի վրա: Լրագրութիւնը խօսեց այդ թուութեան մասին, ի հարկէ սուրբ նպատակով, առաջն առնելու համար: Բայց բանից դուրս եկաւ որ քանի գրվում է, այնքան պակասութիւնը շատանում է: Մենք դարձանում էինք այդքան անտարբերութեան վրա, մինչև երբ հոգաբարձուները մէկը, նոյն իսկ Պոչեանցի ներկայութեան, առանց կարմրելու արտասանեց հետեալ միտքը. «մենք մտադիր էինք շինելու այս և այն պակասութիւնները, բայց որ լրագրի մէջ գրեցին, մենք էլ Ղլուր թողեցինք, և քանի շատ խօսեմ, այնքան շատ կը յետանայ»: Այս խօսքերից յետոյ մենք նոր իմացանք որ զլինեալ քարով ենք տուել, յոնք շինելու տեղ աչքը հանել ենք և վերջապէս բոլորովին ընդհակառակն ենք գործել: Այդ բոպէից ուխտեցի և այստեղ էլ կրկնում եմ որ այսուհետեւ մի խօսք էլ չեմ ասի այդ դպրոցների գործիչներին վրա:

Վերջացնելով ասելիքս, հաւաքում եմ պ. Կիւղացու կողմից հայտնաբերուած և նոյնութեամբ վերադարձնում եմ իրան որպէս յաջանալոր: Մարիբէզ Տէր-Միկելեանի կանն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐԻՆ

Երևան յուլիսի 23

Եթէ ես ասեմ, թէ երևանի հասարակութեան մէջ սկսել է զարգանալ մինչև անգամ էտետիքական զգացմունք, դուք գիտուր կը հաւատաք ինձ: Բայց փաստերը շատ համոզիչ են: Առանց ընդհանուր դատողութիւնների ես կը քերեմ այստեղ միայն մի խոչոր, աչքի ընկնող օրինակ: Քաղաքի լայն և մարդաշատ հրապարակներից մէկի վրա բարձրանում է մի օտարաբնի շինութիւն, որ չլացնում է մարդու իր նորածն ճարտարապետութեամբ: Գեռ հեռուից գրաւում է մարդու ուշադրութիւնը նրա գլխին ծածանվող դրօշակը: Ինչ պէտք է լինի սա—մտածում է մարդ զարմանալով՝ թանգարան, հասարակական գրադարան, հիւանդոց թէ մի որ և է գործարան... Մտեանում ես մի փոքր ևս և առանց ուրելի բացատրութիւնների հարկանում ես ամեն... Այդ դրօշակաւոր շինութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հասարակական արտաբնոց... Նրա մի կողմում ընկած է անդրիկան պարտեզը, միւս կողմում հացի, մսի և այլ ուտելիքների խանութներ, իսկ չորս բոլորում—մրդի կրպակներ... Ինչ սքանչելի ներդաշնակութիւն. երևանցից զբօսնում է պարտիզում, ուտելիքները է գնում, անցուզարձ է անում հրապարակով և իր հասարակութիւնը դիպչում է միշտ մի բարակ հասարակութեան խանութակաւ վայելուցիւն

գործերի մասին կարող է մի տեսակ խոստովանութիւն համարվել: Մենք ցաւով նրկատեցիք, որ ազգային ժողովներից ամենամեծի և ամենահաջակաւորի գործունեութեանը արդէն զրկեցաւ և մինչև անգամ վիրաւորանք հասցրեցաւ: Այդ ժողովի կանոնադրութեան յօդուածները, որոնք գոյութիւն ունեն անհատական ազատութեան պաշտպանութեան համար, ի չար գործ զրկեցան և այն զէնքը, որ արված էր համայնքների ժողովին նրա պաշտպանութեան համար, անշարժական իրազեմ դարձրին: Այդ հանգամանքը անհրաժեշտ կերպով ուշադրութիւն է դարձնում օրենսդրական ժողովի ապահովութեան վրա: Ես յոյս ունեմ, որ դրա համար հարկաւոր միջոցներ կը գործադրվեն: Կրա հետեանքը այն եղաւ, որ ժողովուրդի ներկայացուցչները այս տարի չափից դուրս շատ աշխատեցին: Մենք յոյս ունեցինք այս տարի մի գործ կատարել և բաւականութիւն տալ երկրի ցանկութեանը օրենսդրութիւնը անհրաժեշտ փոփոխութիւններն ենթարկելով: Բայց մենք զրեթէ չը կարողացանք կատարել մեր պարտականութիւնը մենք ստիպված էինք կատարել մի այլ պարտականութիւն, որ շատ տխուր և ծանր է մանաւանդ ազատամիտ կառավարութեան համար: Պարտաճանաչութիւնը ստիպեց մեզ միացեալ թագաւորութեան բաժնիներից մեկի մէջ սահմանափակել ազատութիւնը: Այդ միջոցների գործադրութիւնը ոչ մի իրանդացու համար այնքան ծանր չէր, որքան կառավարութեան համար: Մենք շատ լաւ գիտէինք, որ գործադրած այդ միջոցները չարիքի սպեղանի չէին կարող լինել, բայց նրանք անհրաժեշտ էին, որպէս զի մենք կարողանայինք խփական միջոցներ գործադրել: Այժմ ես յոյս ունեմ, որ մենք կը կարողանանք լրացնել մեր օրէնքները այնպիսի միջոցներով, որ կը բարեկան մի քանի միջոց իրանդացի մեր հայրենակիցների դրութիւնը և կը նպաստեն երկրի բարօրութեանը և հանգստութեանը, որ մենք ամենքս ցանկանում ենք, չը նայելով մեր քաղաքական համոզմունքների զանազանութեանը: Այդ միջոցը թէ և միակ է, բայց պատեւ կը բերէ 1881 թուականի պարլամենտի գործունեութեանը: Մի քանիսները մեղադրում են ազատամիտ կառավարութեանը, որ նա իբր չափազանց մեծ ուշադրութիւն է դարձնում ներքին գործերի վրա և արտաքին գործերով բաւական չէ զբաղվում: Բայց իմ կարծիքով, այդպիսի նախադիմքը այժմեան կառավարութեան մերաբերութեամբ անիրաւացի է: Մի ուրիշ անգամ 15 ամիսների կարճ ժամանակամիջոցի ընթացքում այնքան նշանաւոր հարցեր չեն ծագել, որքան այժմ: Ես չեմ կարող բաւական լինել աշխարհի վանդան մասերի մէջ պատահած անցքերից: Ես միայն միտնարկում եմ նրանով, որ մենք վերջապէս սկսեցինք հանդիսու և խաղաղ ճանապարհով ընթանալ: Ես հաւատացած եմ, որ մեզ ոչ ոք չի մեղադրի այն բանի համար, թէ մենք, մի կողմ թողնելով կեղծ ամօթը և կեղծ հպարտութիւնը, փոխանակ արևնահեղ ճանապարհ ընտրելու անանց պատերազմի և անանց արևնահեղութեան, տուինք ուրիշներին միայն այն, ինչ որ կը տայինք ամենափառաւոր յաղթութեանը: Ինչ կը վերաբերի թութիւններից յետոյ: Ինչ կը վերաբերի Արևելքին, արտաքին գործերի միտնարութեան աշխատանքները այդ երկրի մէջ կատարեալ աջողութեամբ պատկերացան: Եւրասիական ընդունելուց յետոյ մենք անշարժ դրութեան մէջ գտանք երկու հարցեր, որոնք Բերլինի գաղտնագրի հետեանքներ էին: Այդ երկու հարցերը յունական և չերոսկովիական վճռված են բաւականացուցիչ կերպով առանց արևնահեղութեան, առանց պատերազմի և սուլթանի առողջ դատողութեան շնորհիւ: Գ

ընթաց Բերլինի գաղտնագրի հետեանքներ էին: Այդ երկու հարցերը յունական և չերոսկովիական վճռված են բաւականացուցիչ կերպով առանց արևնահեղութեան, առանց պատերազմի, Եւրոպայի համաձայնութեան և սուլթանի առողջ դատողութեան շնորհիւ: Գ

ՇԱՄԱԿԻՑ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Հայաստանի ժողովուրդին այսօրուան անհրաժեշտ պէտքերէն մէկն ալ դրամն է: Աս անանկ խնդիր մ'է, որուն բնաւ տարակուսել պէտք չէ, որովհետեւ չորս անգամ չորսը տասնվեց կ'ընէի պէս ճշմարտութիւն մ'է: Կիւղացի երկրագործ ժողովուրդը միշտ դրամի պէտք ունի, զոր ձեռք բերելու համար շարունակ վաշխառուաց կը դիմէ:

Անագորուն վաշխառուաց դրութիւնն արդէն յայտնի է: Խեղճ գիւղացին 100 դրութեան փոխառութեան մը համար քանի մը պատիր վաշխ կուտայ, և զարմանալին այն է որ շատ անգամ ունեցածը չունեցածն ալ եզրը, ոչխարը, արար և այլն կուտայ, և դարձեալ պարտքէ չազատիր: Ուստի ճարահատեալ կը պարտաւորի Պօլիս դաղթելու, ուր յայտնի է թէ ինչ թշուառ կեանք կը անցնէ հետու իր ընտանիքէն, գաւակներէն և հայրենի երկրէն: Ահա այս է Հայաստանցոյն իր հայրենի երկրէն դուրս գաղթելուն մէկ գլխաւոր պատճառն ալ:

Այս խնդրոյն նկատմամբ արդէն 4—5 անգամ դրամ ըլլալով չենք ուզեր նորէն անդրադառնալ: Արդ, Կիւղացի երկրագործ ժողովուրդը թէ անդուժ վաշխառուաց ճիւղաներէն ազատելու և թէ գաղթականութեան պատճառը մասամբ վերցնելու համար կը փութանք հետեանկ շահաւէտ առաջարկութիւնն ընել:

Ուստի կ'ըսենք. Պօլսեցի 10 ազգայինք եթէ 1000-ական ոսկի գրամագուլուն գնելով դէթ առաջին անգամ կարոյ մէջ պահեալ մը հաստատեն և տարին հարիւրին 12 տոկոսով փոխ ստակ սան, խիստ մեծ բարիք մը ըրած կըլլան, բարիք մը, զոր սակայն գործելու համար իրենց քսակէն բան չպիտի կորսնցնեն. ընդհակառակ իրենք ալ պիտի չաշին, որովհետեւ հոս տարին հարիւրին 6—7 տոկոսով ստակ տալու տեղ կը փնտռեն շատ անգամ և չեն գտներ:

Բայց թողունք իրենց շահը, զոր կարելի է չուզեն հաշուի առնուլ, սակայն գոնէ բարեգործութեան և ազգասիրութեան նըպատակաւ պէտք է որ այս բանին ձեռնարկեն, հաստատուելու համար թէ Հայերը միայն խօսքով ազգասէր չեն:

Իսկ եթէ այսքան փոքրիկ գոհողութիւն մ'ընեն անկարելի է, ան ատեն կը հարցնենք իրաւամբ թէ չոր խօսքով Ս. Պատրիարքը կուզենք ըսելն ինչ նշանակութիւն ունի:

Բառերնիս ճշգնեք.—հրաշք կուզենք ըսելն աւելի կը պատշաճի:

ՇԱՄԱԿ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Բաղ-Հալլ, 10 օգոստոսի

Մեղանում, թէ Հայաստանում և թէ Վրաստանում, սովորութիւն կայ պաշտելու ուխտագրութիւնը, այսինքն Ս. Սարգիս, Ս. Գեորգ, թէ լէթ, Բօլսիս, կամ Երեւանի նահանգի գոյնապան խաչերը, օրինակ Ս. Մուղին, կամ Լօռու գաւառի Ս. Նշանը, Ս. Օհանը (Յովհան Իմաստասիրի գերեզմանը) որոնք են վերջին յոյսը մեր նախնիներին: Փառասցեցի թեւադրութեամբ կամ իրանց դարձակ յոյսերով մեր հիւանդատները տանում են խաչերը դուրս թոյլ և յետին ատիճանի հիւանդութեան հասած խեղճերին, ջարդելով նրանց կողքերը սայլելով, որպէս զի խաչ

չը փրկութիւն տայ, ոչխարներ են գործում մոմեր վաւերով, ինչ լինելով աղաչում բողոքաւոր Ս. Սարգիս, կամ կարմիր-ձիւաւոր Ս. Գեորգին հիւանդին առողջութիւն վերադարձնել: Իսկ այդ ժամանակ խաչից իր լաւանալուս սպասելով խեղճ նեղացած հիւանդը ընկած է լինում անյարմար, խոնաւ գետնաւոր խրճիթում, առանց բժշկի օրնութեան, տնքում է և օրից օր աւելի մտանում մահվան դրանը: Ետեւոր ուխտագրութիւնը վերադառնալով ճանապարհի վրա են մտնում: Մարդը ակամայ սարսափում է իրեն իրան հարցնելով մինչև երբ պէտք է նահապետական նախապաշարմունքներով ապրի և շարժարկի մեր ժողովուրդը, յոյս գնելով քարերի, խաչերի, մատուռների պատերի, մատուռների վրա և ոչ թէ քրիստոսի անունով և գիտութիւնից մշակված բըժշկական առատ, դրական միջոցների վրա: Գ

Կամ հասկացողութիւնից շատ բարձր է, որ ես վեր առնեմ մանրամասն նկարագրեմ Եւրոպայի բոլոր հանրային ջրերը և կամ սրանց ամենքի գործիւնը և նշանակութիւնը. միայն կասեմ որ Աւստրիայի մէջ կան զանազան ջրեր, այլ և այլ անուններով և նշանակութեամբ, որոնք են: Կարլս-բադ, Ֆրանց-ս-Յալ, Մարիեն-բադ և շատ ուրիշներ, վերջապէս և այն ջրերը, որ ես այս րօպէիս բժշկում եմ՝ Բաղ-Հալլ: Սրա ջրերը և օդային է, նրան խմում են և նրա մէջ լողանում: Այս ջրերը ուղարկվող հիւանդներն են անդամալոյճները, բորոտները, վիրաւորվածները, խուլական ցաւերով հիւանդները, սիֆիլիտականները և այս ցաւից միացող ունեցողները, թոյլ կազմուածք ունեցողները և բնվածաբան հիւանդները, որոնց թէև և ես եմ պատկանում: Բժշկութիւնը խիստ և կանոնաւոր է, բայց և ուրիշ կողմից հիւանդը վարձարկված է գեղեցիկ քրտութեամբ, որի մէջ նա ապրում է: Կեղեցիկ անտառ, որի մէջ շինած են զանազան ուղղութեամբ հարկէն և կրկին ճանապարհներ, ծաղկանոցներ, ջրնոցներ և աւազաններ, անպատմելի բարեխառն օդ.—այդ բոլորը ճանապարհորդ կերպով է ազգում հիւանդի վրա: Գ

Հիւանդները ամեն տեսակ ազգութիւնների ներկայացուցիչներ են, որոնց թուում կան այժմ և հինգ հայեր: Սրանց բոլորի կապում է միմիայն համաշխարհային ֆրանսիական լեզուն: Զբօսանքի վրա, ջրեր խմելու ժամանակ, կրթականներ ածում են զանազան ժամանակաւ եղանակներ. ջրեր խմելուց յետոյ, եթէ լաւ եղանակ է, անց մենք ժողովվում են Վուր-Սլօսին առջև, որտեղ դրած են շատ թուլ մարդիկ և որտեղ հիւանդները կարող են նախաճաշի անել: մի կէս ժամից յետոյ հիւանդները գնում են լողանալու: Այնպիսի է պատմել թէ որքան կարգ ու մաքրութիւն է տիրում քաղաքին: որտեղ, որչափ ամեն բան աչքիդ յարմարեցած է հիւանդների համար: Բազմաթիւ մանկան պէս աչքիդ ընկնում է հիւանդի, մաքուր, մարմնաւոր աւազանը, ծառան խոսքի փոռում է սպիտակ սաւանդ քարին չը դիպչի, իսկ 28 աստիճան ունեցող ջրից դուրս գալուց յետոյ, արդէն պատրաստ է տաքացած սաւանդը որ հիւանդը բազանից դուրս գալով չը մտնի Բժշկների հոգացողները դուրս գալով չը մտնի Բժշկների հոգացողները: Կարող ենք ասել, որ մասին անպատմելի է: Բայց նրանց ամեն մի պատուէր պէտք է կատարվի ճշգրտութեամբ, որովհետև ամբողջ օրը բաժանված է ճշգրտութեամբ կանոնաւոր ժամանակափոխների վրա. նշանակված է իր պէտք է ջրեր խմել, որքան ժամանակ զբօսելը: Երբ անհանալ տանը հանդիսու նստել, կըր նախաճաշի ուտել, կըր լողանալ, կըր ճաշել, որ ժամին տուն վերադառնալ և այլն: Գ

Այժմ կը փորձեն փոքր ինչ նկարագրել Բաղ-Հալլի դիրքը: Արևմտային երկաթուղին բերում է ձեզ մինչև Եսապիլի քաղաքը, որտեղից երկու ժամից ճանապարհը կառքով տանում է ձեզ մինչև Բաղ-Հալլ: Եսապիլից դուրս անդադար բարձրանում էր դէպի արքերը և գեղեցիկ գաղտնիքով: Բաղ-Հալլի դիրքը ինչպէս ինձ ասեցին 3200 ֆուտ բարձրութիւն ունի ծովի մակերևութից: Այդպէս առաջ երևում են գեղեցիկ լեռներ խիտ անտառներով պատած: Կէսի արևմուտքը տեսնում ես անհամար բլուրների զանազան բարձրութեամբ, որոնց մար բլուրների գագաթները արևմուտքից արևելքը և վարելահողերով: Կիւղացիները շատ կատարելագործված է երևում: Երկու ձիով մեծ արորը վարում է աւելի հեշտութեամբ, քան թէ մեղանում 12 ջուխտ զօրից գոմէշներ: Այստեղի գիւղացին իրան աւելի բազալուր է նամարում քան թէ արևմտական կարուածատէրը մարում քան թէ արևմտական կարուածատէրը մեղանում: Կէսի հիւանդ ստանում ես շատ մեծ վրա կան բաղմաթիւ, մին միւսից հետո գիւղեր, գեղեցիկ այգիներով և շատ սև վարելահողով: Այստեղ հողը կրկու և կրկին կերք անգամ են ցանում: Օրինակ հողը հնձնուց յետոյ, իսկոյն վարում են և ճարխալ, բողի և գազար են ցանում, իսկ ետնջան և խրտուկը ցանում են անպատճառ երկու անգամ: Խոտն էլ կերք անգամ են հնձում: Միով բանիւ կիւղացիները շատ շատ ապրում են և առաջ կոացել այստեղ ու կատարելագործվել: Ես մինչև անգամ անդ յարգելի բանաստեղծ Բաղիլին էլ դժուար կը լինի կրակել որ և է ժամանակ մեր ամենաքիտ նորին ժողի խեղճ, անտեղ և մտորած նաջ գիւղացու համար հասնել այդ նախանձելի դրութեանը: Գ

Հ. Արքեպիսկոպոս

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

«Порадокъ» քաղաքում կարգում ենք հետեւեալ լուրերից: Անգլիական միւսիստուր-

թիւնք եռանդոս կերպով անդում է Կ. Պօլսում Արմենիայի մէջ բէֆօրմներ մտցնելու մասին: Լօրդ Գրեյըրին խորհուրդ է տալիս սուլթանին սպասելու պետութիւնների միջամտութեանը: Անգլիական կառավարութիւնը, հրատարակել է, ինչպէս յայտնի է, կատարող-գիրքը Փոքր-Ասիայի և Սիրիայի դրութեան մասին: Այդ գրքում բոլոր վանդակված է լօրդ Գրեյըրի և Գօշէնի նամակագրութիւնը այն զեղծումներով, և խոտութիւնների մասին, որոնք կատարվում են Արմենիայում: Արմենիայի դրութիւնը այդ պաշտօնական գրքի մէջ համեմատում է Բօլցարիայի դրութեան հետ 1877 կոտորածների ժամանակ: Լօրդ Գրեյըրի իր հեռագրիներէրց մինի մէջ յանձնում է Գօշէնին յայտնել սուլթանին, որ հայերի համբուրութիւնը սպառված է և որ նրանք ամեն բանին պատրաստ են: միայն որ կարողանան այդ յուսահատական դրութիւնից դուրս գալ: Գ

—Կ. Պօլսի «Լոյս» լրագիրը մէջ կարգում ենք հետեւեալը: Ստացի աղբիւրի կիւմանք թէ Աղաբեան սրբազանը հրաման ըրել է որ կաթօլիկ կաթողիկոսարանի մէջ հայերէն լեզուն խօսվի: Կը փոփառվեք որ ճշգրի գործադրվի սոյն հրամանը, զոր զէպ ազգային միութիւն քայլ մը կը համարենք: Այսպէս կըսենք, որովհետև ազգի մը զվեաւոր յատկանիչներն մէկն ալ լեզուն է: —Նոյն լրագրում կարգում ենք և հետեւեալը: Գ

Սեբաստիոյ դեր. Պետրոս եպիսկոպոս, պատրիարքական փոխարդ գեր. Ռուսոնգրեան, գեր. Տ. Յովհաննէս Մկրեան և մեծ. Ա. Ֆրէնկեան, Բ. Թէլեան և Կ. Խաչատուրեան և ֆէնտիները կաթօլիկ-հայոց պատրիարքարան երկմալով ի դիմաց ամեն պատրիարք հօր Աղաբեան սրբազանի ընտրութիւնը հնորհաւորեցին: Գեր. Մկրեան գեղեցիկ բանախօսութիւն մը ըրաւ, որուն համակարգի կերպով պատասխանեց Աղաբեան սրբազանը և խնդրութիւն յայտնեց սրբազան պատրիարք Ներսէսին հրաժարական չընդունվելու համար: Գեր. Աղաբեան անձամբ այցելութիւն պիտի գայ կըսվի առ ամեն Ս. Պատրիարքն, որ նոյնպէս պիտի փոխարինէ: Պաշտօնական այցելութիւնն աղէկ, սակայն այսպիսի քաղաքավարական ցոյցերով պիտի կրնան անհետ լինել արդեօք անցելոյն դասն հետքերն, թէ մոխաւանդութիւնը սակաւին նոր գուհեր պիտի բերէ իր հետ: Աղաբեան սրբազանի ընտրութիւնը կրնայ նոր դարագուլուն մը բանալ, եթէ ն. բարձր սրբազանութիւնն ազգային միութեան ոյժ տուող ընթացից մէջ գտնվի: Գ

«Morning Post» լրագրին գրում են, որ կոմս Կօրթի, Կ. Պօլսի խոտական ղեկաւոր, ստացաւ հրահանգներ կառավարութիւնից, որով նրան առաջարկվում է Անգլիայի դեսպան Գրեյըրին հետ համաձայնութեամբ գործել Արմենիայի մէջ մտցնելի բէֆօրմների հարցի վերաբերութեամբ: Գ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԱՐԿՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ
ՓՈՒԲՁ, 10 օգոստոսի: Ընտրութիւնների ժամանակ յաղթեցին չափաւոր հանրապետականները: Բոնապարտիստները յաղթված են: Առ սյժմ ընտրված են 279 հանրապետականներ, 39 միապետականներ: 46 կըրկ-նաքուէարկութիւններ պէտք է լինեն: Գամբետտա ընտրվեցաւ Բելվիլի երկու շրջանների մէջ: Գ

ՆԻԻ-ԻՐԻԿ, 10 օգոստոսի: Նախագահ Գարջիլդի կեանքին վստահ է սպասում: Ս. ՊԵՏՐՔՐՈՒԹԻՒՆ, 10 օգոստոսի: Պետական քանկի 5% տոմսեր առաջին շրջանի արժէ 96 ր. 25 Կ., երկրորդ 94 ր. 50 Կ., երրորդ 94 ր. 75 1/2 Կ., չորրորդ 94 ր. 25 Կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսեր արժէ 231 ր. 75 Կ., երկրորդ 228 ր. 50 Կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսեր արժէ 91 ր. 25 1/2 Կ., երկրորդ 91 ր. 25 Կ., երրորդ 91 ր. 37 Կ., ոսկի 7 ր. 76 1/2 Կ.: Ռուսաց 1 րուբլ 1 օնգոնի վրա արժէ 25,81 պէս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 205 մարկ: Բօրսայի արամագրութիւնը հանգիստ է: Գ

Խմբագիր.—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻԱՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Գ Ա Մ Ա Ռ - Գ Ա Թ Ի Պ Ա Ց Ի

Բոլոր բանաստեղծութիւնների ժողովածուն, տպած Մասկովյուսում մեծաբանութիւնը թղթի վերայ, հեղինակի վիճակը պատկերով գինը 50 կ. վաճառվում է ԿՆՏՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՑԱՌԱՆՈՑՈՒՄ:

Նոյն տեղը վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները.

- 1) Ռոբինզոն-Կրուզո՝ Արանեան » 60 կ.
- 2) Ահմեդի տոպրակը՝ Ղալայեան » 10 "
- 3) Մ ա ղ կ ա ղ ա ղ արձ. և չափ. բանից՝ Կոստանեան՝ — " 25 "
- 4) Ուսուցիչ հայոց լեզուի՝ Նազարեան՝ — — — " 40 "

Վերջին երկու գրքերից գուժարով գնողները նշանաւոր զիջումն են ստանում:

144 Արժուճու գալերեա 144
ամենախճան պահեստ
մերթիւն և հայեթներին:

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦУНИ ОТДАЮТСЯ МАГАЗИНЫ ВЪ НАЙМЫ

Въ галлерей имѣются: вода, газовое освѣщеніе и телеграфная станція.

10—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՆԻՄ

ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՄԱԳԱՋԻՆՆԵՐ

Գալլերեում կայ ջուր, գազի լուսավորութիւն և հեռագրական կայարան:

10—10

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ԳԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ.

մեքարաններ, կոնֆեկաներ, ԿԱԿԱՍ, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բոխիներ, թասեր, երես լուսանալու ամաններ, չայիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (սյճալի), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԳՆԱԿՆԵՐ, գզաշներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիաներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՕԼՎԵՐՆԵՐ, այրումներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՑ, արիկո, պարուսին, թաշկինակներ, երեսրիչներ, կիծուկա, գուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԷՑՆ, խեբես, կոնեակ և այլն: Թէ՛ք մեծ քանակութեամբ ՎԱՑԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԳԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գանել ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:

Մի և նոյն տեղը էժան գնով. ԵՐԲԵՑ մազնեղիա, խմոր ԾԱՐԱԻԻ գէժ, ԽԻՆԱՑԻ գինի ջերմի գէժ, կարբոնաթճի, հեղուկ և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ վատերկրողների համար, պարսկական փոշի:

47—100

Հրատարակութեամբ Ներսիսի Սիմոնեանց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Երեբերի «Տնային բժշկական մարմնամաքութեան» գրքից հայերէն թարգմանութիւնը 45 պատկերով, որոց միջոցաւ կարելի է կատարել առողջապահական բուժման եւ մարմնամաքական կրթութիւններ ամեն տեղ, ամեն ժամանակ և առանց դործիքի: Նա յարմարացրած է ամեն հասակի արանց և կանանց համար: Գինն է 40 կոպ. ծախվում է «Կենտրոնական և Կովկասեան գրա-վաճառանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վարդանեանցի մօտ.» Тройцкій пер. типография Вартанянца, въ Тифлисъ.

ՀԷՆՑ ԻՍԿՈՅՆ ՍՏԱՑՎԵԼ ԵՆ

մեծ քանակութեամբ հրացաններ, ԲԷՎՕԼՎԵՐՆԵՐ, փամփուշաներ, ԹԷՑ առաջին տեսակի, բոխիներ և այլն: 204 ԲՕՐ (choke bore) ՀՐԱՑԱՆՆԵՐ George Dau-ի գործարանից 120 ր., ԲԷՎՕԼՎԵՐՆԵՐ բուլղոց 11 բուլղոց, 700 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5—40 րուր: Ծախվում է նոյնպէս պարուսին կիսագնով և այրումներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:

12—12

Въ Редакціи газеты «МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Մ. ՎԱՐԳԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. Ն Ո Ր Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Տեղափոխվեցաւ Գ ա ն ո Վ ս կ ա յ ա փողոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝ ՏՐՈՑԻՑԻ փողոցը № 11. փ օ ս տ ա տ ա ն ետեւի քուչանս ընդունվում են ամեն լիզուով և ամեն տեսակ պատուէրներ ամենամատչելի գնովով:

Նոյն տպարանում ընդունվում են և պատուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ տպագրութեան համար փայտի և պղնձի վրա:

„Խ Ե Ն Թ Ը“

ԱՐԿԱՑՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ՓՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՑՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՑՖԻԻ

Ցպիմս մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 էրեսից: Թիֆլիսում ծախվում է «Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական գրա-վաճառանոցում», «Կովկասեան գրա-վաճառանոցում» պ. Ջաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Նահինեանցի, Բոգարջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագազիններում:

Գինն է 1 րուրը 20 կոպ.:

ԵՂԲԱՐԲ Կ. ԵՒ Ս. ՊՈՊՈՎՆԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՒՑ

Մ Օ Ս Կ Վ Ա Ց Ո Ւ Մ

Գրասենեակը Կո. գնեցի կամրջի վրա, Կ. Ս. Պոպովի տանը: Պատիւ ունինք յայտնելու հասարակաց գիտութեան, որ մեր ֆիրմայի ԹԻՑԻ առևտուրի համար բաց արինք նորերուն նոր խանութներ և հետևեալ քաղաքներում: ԽԱՐԿՈՎՈՒՄ—Պետրոպոլի փողոցի վրա, սեփական տանի ԹԻՖԼԻՉՈՒՄ—Գոյովինսկի պրոսպեկտի վրա, Միրիմանեան տան: ՄԷՎԱՍՏՈՊՈԼՈՒՄ—Բաշայ-Մօրսոյի փողոցի վրա, Կոզէն վաճառականի տանը:

Ինչպէս այս, նոյնպէս և առաջուց խանութները Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ և ԿԻԷՎՈՒՄ—Թէ՛յն որ առած է ֆունտերի, կէս ֆունտերի և քառորդ ֆունտերի, ուղարկվում է մեր զլխաւոր պահեստի խանութից, որ գտնվում է Մասկովյուսում, Կրասնոսելսկի փողոցի վրա, սեփական տան: 6—30

ՎԻՆՆԱՑԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջին փողոցում Կատարիկաց փողոցի սնկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼԱՍՅԱՆԻ պահեստում:

Օտարաբաղաբացիք կարող են զիմել այս հասցեով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

54—150

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՑՆԸ վերադարձնող: Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՍՍՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՑԻ ԻԻՂ, մազերը ամրացնող համար, 1 ր. ամանը փրձին գլխա-ցաւի գէժ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ և հոտաւեա ջրեր և այլն: 11—100

Արգէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին ՐԱՑՖԻԻ «ԽԵՆԹԸ» անու-նով փխպաստութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք զիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահաբե-Յակոբեանցի տպարանը: ԲԱԳՈՒՄ Այլքասնող թարխանեանցին, ԹԱՐՎԻՉ՝ պ. Գրիգոր Բեջանեանցին:

Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБЪЛУ АП-РЪСЯНЦУ.

ՄՐՈԾԱԿՆԵՐ Կատարելու փոշի: Ծախվում է ԾԱՏՈՒՐՈՎԻ ԼՄԱՎ պի մագազինում:

ԵՐԿՎԵԱԼ ՀԱՒԱՍԱՐՄԱՍԱՐ ՍԵՐԳԷՅ ՎԱՍԻԼԵՎԻՉ ԶԵՄԵՍՈՎ տեղափոխեց իր բնակարանը Արսե-նաշայա փողոց «Կրուժօի» շինութեան ետեւը, Գարբուճօվի տանը: 3—5 (1)

Նուրսու ազգային-հոգեւոր դպրոցին հար-կաւոր է մի ուսուցիչ ուսուց լեզուի և թուրքարանութեան՝ 600 րուր. ուժիկով: այլ և հարկաւոր են ուսուցիչներ Գարաբաղի և Նուրսու գիւղական դպրոցների համար: Ցանկացողներին խնդրում եմ շուտով զիմել հիմ՝ Շուշի:

Թե՛մ. վերաստուուչ 3. Տէր-Գրիգորեանց 5—5

ԳԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ համար ՀԱՒԱՍԱՐՄԱՍԱՐ Պ. Մ. ԼԵԲԵԴԻՆՍԿԻ տեղափոխեց իր բնա-կարանը Օրթովիւր տանը Ինստիտուտի մօտ: 5—5

ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ Թէ՛յ լու տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատան առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ ԹԻՖ-ԼԻՍՈՒՄ, որպէս զի խմանան Անգլիա-կան խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէ՛յի համեմատական ԳԵՐԱԶԱՆ-ՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական խանութը կշուում է ՄԱՔՈՒՐ Թէ՛յ առանց թՂԹԻ և ԱՐՃՃԻ: 32—100

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՌՈՍՈՒՑԻՉ անունով ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒՍՅ ԳՈՍԱԳԻՐԸ ԼՍՍ տեսաւ և ծախվում է Կովկասեան ու Կենտրոնական գրա-վաճառանոցներում:

Գինն է 40 կոպէ կ:

Իսկ ով ցանկանում է հատը 35 կոպէ-կով ձեռք բերել, գինը ԿԱՆԻՍԿ ՎՃԱ-րելով և ճանա պարհա ծախսը իր վրա առնելով:

Թող զիմէ մեզ հետևեալ հասցեով.

„Въ Тифлисъ.— На Авлабарѣ. И-вану Петровичу Назарьянцѣ.“

ՎԵՐԱԿՈՒՆԵՐ 4 ր., ճրճողներ 1 ր., ծախվող աթոռներ 1 ր. 50 կ., ՓԱՑՑ-ԱՌՈՒ 4 ր., ԲԱՅԿԱՌՈՒՄ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 րուր և աւելի, Թէ՛յի բաժակներ 25 և 30 կ., մի աման քորոցներ 50 կ., պատկաւ ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԱ-նեՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱ-ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:

10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—/յգ զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.— 1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բոսաղէյ. 1 ր.—1 ր. 30 կ., պա-րուսինա 40 կ.—1 ր., 300 հատ բեզովիք 4 ր.—35 ր., 700 այրում կիսուսուրով, 10,000 ֆունտ թէ՛յ ԹԷՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.: եր-կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-մար: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ:

29—100